

**ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ
ԽՄԲԻ՝ ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՎԱՅՐՈՒՄ**

ԱՐՄԻՆԵ ՍՁԱՆՅԱՆ

ՀՊՏՀ Ֆինանսների ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
finarm2018@gmail.com

DOI: 10.54503/978-9939-481-23-4-428

Համառոտագիր

2025թ. տարեկազմի դրությամբ ՀՀ մշտական բնակչության մեջ քաղաքային և գյուղական բնակչության մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 64,1 և 35,9 տոկոս, իսկ քաղաքային և գյուղական բնակավայրերի աղքատ բնակչության մասնաբաժինը՝ 19,4 և 26,1 տոկոս: Ընդ որում, ՀՀ-ում ազգային շեմից ցած ապրող բնակչության ցուցանիշը 21,7 տոկոս է: Այս առումով, ըստ մարզերի, ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Շիրակի մարզում՝ 43 տոկոս՝ Երևան քաղաքի 16,9 տոկոսի–համեմատ: **[15, էջ 20, 33, 36]** Մեր դիտարկումները վերաբերում են նախակենսաթոշակային տարիքի խոցելի քաղաքաբնակ անձանց (ՀՀ բնակչության թվում ավելի քան 750 հազ. մարդուց մոտ 500 հազարին)՝ լուսաբանելով, ըստ բյուջետային ներգրավվածության հատկանիշի, վերջիններիս բևեռացվածության տարբերիչ գծերը: Հատկանշական է, որ Շիրակի մարզի բնակչության մոտ 83 տոկոսը կենտրոնացած է ուրբանիզացման անկման մակարդակով աչքի ընկնող Գյումրի քաղաքում: Ուստի, ընդհանրական առումով, ելնելով հողվածի ամբողջական բովանդակությունից, հարց է ծագում. արդյո՞ք առաջիկա միջնաժամկետում տարեցտարի կավելանա աշխատող կենսաթոշակատուների, ներառյալ բիզնես գործունեություն ծավալող օրինապահ հարկատուների թիվը, որոնք գիտակցում են ամենօրյա ռեժիմով պետական պարտքի բեռի սպասարկման ծանրությունը, լիարժեքորեն ընդգրկված են կենսաթոշակային բարեփոխումների ակտիվ դրական փոփոխությունների մեջ և բացի բյուջեից ստացումներից՝ որպես մասնակից տեղյակ են իրենց ներդրումային փաթեթի մանրամասներին:

Հանրային ոլորտում, ֆինանսական տեսանկյունից, հասարակության ակնկալիքը սահմանափակվում է ամենամյա բյուջետային ծախսերով, և ինչպես համախմբված բյուջեի 1/10 հարաբերակցությամբ համայնքների բյուջեների, այնպես էլ պետական բյուջեի պարագայում դեռևս չի կարող դրվել հանրային ծառայության ընդհանուր արժեքի ճշտորոշման խնդիրը, քանի որ լուծելի խնդիրները հիմնականում ժամանակային տարբեր բնութագրեր ունեն: Անհրաժեշտ է նշել, որ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից, բյուջեի ուղղակի հարկերի՝ անուղղակի հարկերին գերազանցող տարիների շարունակության առումով նպաստավոր փոփոխությունները տնտեսական քաղաքականության համակցվածությամբ փաստագրելու ժամկետն ավելին է, քան տասնամյա երկարաժամկետ հեռանկարը: Հարկաբյուջետային հատվածի խնդիրներից հերթականի հաղթահարման ուղիների նախանշմամբ՝

հետազոտական աշխատանքում շարադրվում է գործնական արդյունքը: Ներքոգրյալ բազմակողմ շեշտադրումները թույլ են տալիս վերլուծել գերբնակեցված երևան քաղաքում և վերջինիս հետ առաջնահերթորեն առավել համադրելի Գյումրի քաղաքում առկա մի շարք հիմնահարցերի ազդեցության շրջանակները: Կարևորելով հասարակության տարիքային անցումների և հարկաբյուջետային համակարգի փոխառնչությունը՝ բյուջետային խնդիրների քննարկմամբ տեսանելի են դառնում բյուջետային փոխհարաբերությունների սահմանները՝ միաժամանակ հաշվի առնելով անհատի սուբյեկտիվ ընտրության՝ միջինից օրըստօրե շեղման հավանականությունը: Հարկ է նշել, որ հողվածում հարցերն արծարծվում են բարօրության տեսանկյունից՝ հավելյալ ստեղծելով ինդուկցիայից դեդուկցիային անընդհատ անցման անհրաժեշտություն: Իրականության մեջ տեղի ունեցող բացասական փոփոխություններին հակառակ՝ ՀՀ երկարաժամկետ տեսլականի կիզակետում միշտ էլ եղել ու մնում է հանրության բարեկեցության մակարդակի բարձրացման խնդիրը: Հետևաբար՝ նշյալ առաքելության ապահովման տեսանկյունից, անհրաժեշտ է վերանայել ոչ թե երկրի տնտեսական անվտանգ համակարգը սպասարկող տարբեր քաղաքականությունների մշակման հիմքը, այլ ուսումնասիրել այն բացասական զարգացումները, որոնք արձանագրվել են բազմաթիվ միջոցառումների արդյունքում և բացահայտել դրանց շտկման ուղիները՝ դրական հետևանքներ ապահովելու ակնկալիքով:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ հանրային ծառայություն, քաղաքային միջավայր, տնտեսական համակարգ, հարկաբյուջետային խնդիրներ, տարիքային խումբ:

MANIFESTATIONS OF COMPARATIVE PECULIARITIES IN THE FISCAL– BUDGETARY SECTOR OF THE TARGET AGE GROUP OF LABOR RESOURCES IN THE URBAN ENVIRONMENT OF THE RA

ARMINE SCHANYAN

Armenian State University of Economics

Chair of Finance

PhD in Economics, Associate Professor

finarm2018@gmail.com

Abstract

In the public sector, from a financial point of view, the expectation of society is limited to annual budget expenditures. In the case of both community budgets, with a ratio of 1/10 of the consolidated budget and the state budget, the problem of determining the total cost of public service cannot yet be posed, since the main solvable problems have different time characteristics. It is important to note that from a fiscal policy perspective, the period for documenting favourable changes in terms of the continuation of years of direct taxes in the budget slightly exceeding indirect taxes, in large part, in conjunction with economic policy, is longer than the shortest ten-year long-term perspective. The sequential separation of these problems in the fiscal–budgetary sector, along with outlines of overcoming them, creates an opportunity to formulate practical research outcomes. Thus, the multifaceted emphases below will allow us to analyse the scope of influence of a number of key issues in the combination of the overpopulated city of Yerevan in the Republic of Armenia and, first of all, the more comparable city of Gyumri. Through the age transitions of society, emphasising the two-sidedness of the relationship with the fiscal–budgetary system, the discussion of budgetary issues allows us to see the boundaries of budgetary relationships, while simultaneously taking into account the possibility of daily deviations from the average of an individual’s subjective choice. It is important to note that the article addresses issues from a welfare perspective and additionally examines the ongoing effects of the transition from induction to deduction. In contrast to the negative changes reflected in reality, the long-term vision of the Republic of Armenia has always been to increase the level of public welfare. I think that from the perspective of ensuring the aforementioned mission, it is necessary to review not only the foundations of the development of various policies serving the country’s economic security system, but also to study the possibilities of reviewing the negative developments that have occurred as a result of the implementation of numerous measures, with the prospect of achieving positive consequences.

Keywords and phrases: Public service, urban environment, economic system, fiscal issues, age group.

**ПРОЯВЛЕНИЯ СРАВНИТЕЛЬНЫХ ОСОБЕННОСТЕЙ ФИСКАЛЬНО–
БЮДЖЕТНОГО СЕКТОРА ЦЕЛЕВОЙ ВОЗРАСТНОЙ ГРУППЫ
ТРУДОВЫХ РЕСУРСОВ В ГОРОДСКОЙ СРЕДЕ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ**
АРМИНЕ СЧАНЫАН

Армянский государственный экономический университет,
к.э.н., доцент кафедры финансов,
finarm2018@gmail.com

Аннотация

В общественном секторе с финансовой точки зрения, ожидания общества ограничиваются годовыми бюджетными расходами, и в случае как муниципальных бюджетов, составляющих 1/10 консолидированного бюджета, так и государственного бюджета, проблема определения общей стоимости государственных услуг пока не может быть поставлена, поскольку основные решаемые проблемы имеют разные временные характеристики. Важно отметить, что с точки зрения фискальной политики период, необходимый для документирования благоприятных изменений в плане сохранения в бюджете лет прямых налогов, незначительно превышающих косвенные налоги, в значительной степени в сочетании с экономической политикой, длиннее, чем кратчайший десятилетний долгосрочный период. Последовательное разделение этих проблем в фискально–бюджетном секторе с обозначением путей их преодоления создает возможность для формулирования практических результатов в исследовательской работе. Таким образом, многогранные акценты, представленные ниже, позволят проанализировать масштабы влияния ряда ключевых вопросов в совокупности перенаселенного города Еревана в Республике Армения и, прежде всего, более сопоставимого города Гюмри. Через возрастные переходы общества, подчеркивая двусторонность взаимосвязи с фискально–бюджетной системой, обсуждение бюджетных вопросов позволяет увидеть границы бюджетных взаимосвязей, одновременно учитывая возможность ежедневного отклонения от среднего значения субъективного выбора индивида. Важно отметить, что в статье рассматриваются вопросы с точки зрения благосостояния, а также анализируются непрерывные эффекты перехода от индукции к дедукции. В отличие от негативных изменений, отражающихся в реальности, долгосрочная цель Республики Армения всегда заключалась в повышении уровня благосостояния населения. Думается, что с точки зрения обеспечения этой миссии необходимо пересмотреть не только основы развития различных политик, служащих системе экономической безопасности страны, но и изучить возможности пересмотра негативных тенденций, возникших в результате реализации многочисленных мер, с перспективой достижения позитивных результатов.

Ключевые слова и фразы: государственная служба, городская среда, экономическая система, фискальные вопросы, возрастная группа.

Ներածություն

20-րդ դարավերջին՝ բացասական եկամտահարկի գաղափարի շրջանակում, ըստ եկամտասատար ազգային ծրագրի [2, էջ 385], չափելիությունը միջակայքային է ընտանիքի գոյութենաբանականից մինչև պարտքախնայողական գրոյական մակարդակի ապահովումը: Թե՛ միկրո, թե՛ մակրո-տնտեսագիտության լավ մշակումը գիտական վերացարկման մեթոդի առանձնացված ներկայացման պայմաններում խնդիր է առաջացնում այնքանով, որքանով, վերոնշյալ տնտեսագիտական ուղղությունների համեմատությամբ, հանրային կառավարումը, որպես համարժեք կարևորություն ունեցող ենթաուղղություն, ի դեմս ծրագրային բյուջետավորման, որը մարդակենտրոնության արդիական և հրատապ սկզբունքի ամենաարդյունավետ դրսևորումն է ապահովում՝ համակցված դիտարկման հնարավորությամբ կարող է սահել տնտեսագիտության տեսության գաղափարախոսականից մինչև կանխատեսման ֆունկցիա՝ գիտական մեկնարկային հենք դարձնելով քեյնսյան տնտեսագիտությունից մինչ ժամանակակից տնտեսագիտության խառնարանում զուտ կիրառականության տեսագործնական արդյունքների դուրս բերումը:

ՀՀ-ում պետական մակարդակում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման տրամաբանական հաջորդ քայլը հետքովիդային ժամանակաշրջանում տեղական ինքնակառավարման մակարդակում թափանցիկ և մասնակցային բյուջետային գործընթացի պլաններում ներկայացվող միջոցառումների իրականացումն էր (օրինակ՝ համայնքային և ազգային մակարդակների ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունների ներդաշնակեցմամբ՝ կարևորելով հանրային ծառայության արժեքի բանաձևումը): [9] Այս համակարգի պարտադրանքն ինչպես շահառուի նույնականացումն է, այնպես էլ ողջ կենսատևողության բոլոր մակարդակներում նրա առավելագույն արդյունքի դիտարկումը: Ինչպես հայտնի է, պատասխանատվության նման մեխանիզմն ամբողջ աշխարհում գերխնդիր է՝ լայն տարածում ունեցող ծրագրային բյուջետավորման համատեքստում:

Տեսանթողական հիմքեր

Վերլուծության նպատակով աշխատանքում ներկայացվել են տնտեսագիտական մի շարք տեսակետներ, դատողություններ, եզրահանգումներ: Մասնավորապես՝ բազմաձգնաժամային միջավայրում, լուծումների բազմազանության մեջ շատ հեղինակներ շեշտադրում են արդյունավետ ուղու ընտրության հարցը: Այսպես՝ Կոմորովսկիներն ամփոփիչ վերլուծությամբ կարևորում են տնտեսական կայունության հիմնախնդիրը՝ նշելով հետևյալի մասին. ամբողջ տնտեսության սահուն գործունեության տեսանկյունից, ցանկալի վիճակը նրա անվտանգությունն է, որը պայմանավորված է իրական ոլորտի ներքին և արտաքին հավասարակշռությամբ, հասարակական կարգի վիճակով և ֆինանսական համակարգի կայունությամբ [7, էջ 133]:

Ուստի կարելի է ասել.

1.Ներքին և արտաքին հավասարակշռությունը խախտվել է գրեթե ամենուր, մինչդեռ ՀՀ-ի նման փոքր և բաց տնտեսությամբ երկրում վերջին տարիներին կարող էին ի հայտ գալ դրական ռիսկերի նյութականացման արդյունքներ (ռելոկանտներ, լոգիստիկ խնդիրների լուծումներ և այլն): Ինչպես

Ի. Ֆիշերն է ասում, ռիսկերը հակադարձ համեմատական են գիտելիքին: Հետևաբար՝ սուբյեկտիվորեն չենք կարող չհիշատակել այն ջիդը, որի շնորհիվ՝ դեռ մեկ դար առաջ եվրոպական քաղաքակրթության մեջ սրճարանային «ինդուստրիայի» նախաձեռնողականությամբ (և ոչ միայն) հայն է աչքի ընկել:

2. Հասարակական կարգի պահպանության տեսանկյունից, հարկ է նշել, որ, պայմանավորված ֆինանսական միջոցների սղությամբ և գերակայությունների դասավորվածությամբ, այս հիմնախնդիրը մղվում է երկրորդ պլան: Աշխարհի շատ երկրներում, սոցիալականից բացի, նախապատվությունը տրվում է պաշտպանական ծախսերին: Հետքովիդային սկզբնական ժամանակահատվածի դիտարկմամբ պարզ է դառնում, որ ՏՀԶԿ երկրների գործառական ծախսերի կառուցվածքում սոցիալական ոլորտի ծախսերի մասնաբաժինը տատանվում է. Հունգարիայում դա կազմում է 55,3 տոկոս, իսկ Չիլիում՝ առավելագույնը՝ 76,3 տոկոս՝ ընդհանուր 34 երկրի 66,1 տոկոս միջին ցուցանիշի համեմատ: Ընդ որում, Չիլիում պաշտպանության ոլորտի ծախսերն ավելի քան երկու անգամ գիջում են հասարակական կարգի և անվտանգության ոլորտային ծախսերին: Համեմատության համար նշենք, որ 70 տոկոսից ավելի սոցիալական հատկացումներ ապահովող 5 երկրների շարքում առանձնանում է Իռլանդիան, որն ցուցաբերում է 4:1 լավագույն հարաբերակցությունն այս երկու ուժային ոլորտներում¹ [21]:

3. Ֆինանսական համակարգի կայունության առումով, կարևոր է նշել այն հանգամանքը, որ վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն իր հերթին նպաստում է մասնավոր շահի առաջանցիկությանը՝ պետական շահի համեմատ: Վերջինս, ճիշտ է, ունի հասարակական կազմակերպվածության ապահովման խոշորածավալ ռեսուրսներ, բայց և այնպես, կապված ֆինանսական հոսքերի ամենամյա սղության հետ, դրա զարգացման հնարավորությունները սահմանափակվում են:

Առաջնորումների այսպիսի անհաշվեկշռվածությունը վերը նկարագրված երեք կետերի պայմաններում հանգեցրել է այն համոզման, որ եթե այս ամենի պատճառը մասնավոր շահի՝ պետականի համեմատ գերազանցությունը չէ, ապա առնվազն միկրոոլորտի սկզբունքների հետադարձ շրջանառության մոռացությունն է: Այս առնչությամբ Լ. Մկրտչյանը իր հոդվածում նշում է. «... ծրագրային բյուջետավորման հիմնական բոլոր սկզբունքները փոխառնած են մասնավոր գործարարության կառավարչական փորձից» [6, էջ 18]:

ՀՀ համայնքների օբյեկտային ընտրության հարցում խնդրո առարկա են դառնում քաղաք-համայնք Գյումրու բյուջետային հիմնախնդիրները՝ Երևանի համեմատությամբ: Մինչքովիդային շրջանում Գ. Ավետիսյանն իր հոդվածում թվարկելով Գյումրի քաղաքի շրջակա միջավայրի իրավիճակի բարելավման միջոցառումները [4, էջ 44], մատնանշում է, որ վերջին տասնամյակներում այս առումով շատացել են վատթարացնող գործընթացները: Նա վեր է հանում խնդիրների մի ամբողջ փաթեթ, որի հիմնական կազմն ընդհանուր է ՀՀ տարածքի համար: Մինչդեռ յուրահատկությունը և ըստ ենթախնդիրների կառուցվածքային տարբերությունները բխում են տվյալ տեղանքի առանձնահատկություններից և ֆինանսավորման մակարդակից: Մեղմ ասած՝ այս տխուր փաստերի շարքին Ա. Բոյաջյանը հավելում է ևս մեկը. վերջին տասնամյակներում, մասնավորապես՝ հետքովիդային

1 Դիտարկումը կատարել է հեղինակը՝ հիմք ընդունելով [7]-ի ամբողջ տեղեկատվությունը:

ժամանակահատվածում Շիրակի մարզը, ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական սանդղակի (1989 թ.), երիտասարդ հասարակության խմբից անցում է կատարել ծերացած դասին, իսկ Գյումրի քաղաքը համարվում է խիստ ծերացած (2021 թ.) **[5, էջ 135]**: ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պատկերի ևս մեկ ուսումնասիրություն հեղինակել է ՀՊՏՀ հետազոտական խումբը՝ նպատակադրվելով մշակել առկա ներուժի առավել արդյունավետ օգտագործման, հնարավոր ներդրումների ներգրավման, նոր արտադրությունների կազմակերպման կայուն զարգացման մոդելներ և ռազմավարություն՝ հիմնված առաջնահերթությունների վրա: Որպես ծառացած խնդիրների լուծումներ՝ առաջնահերթ առաջարկվում են, օրինակ, հարկային քաղաքականության բարեփոխումների շրջանակում ՓՄՁ հարկման պարզեցումը, հարկային բեռի նվազեցումը, վերահսկողության և վարչարարության արդյունավետության բարձրացումը և այլն **[3, էջ 131]**: Հետազոտության մեջ կարևորվում է բացահայտված խնդիրների և առաջարկվող լուծումների շարքի դիտարկումը՝ համալիր և համակարգային բարեփոխումների համատեքստում:

Ուսումնասիրության մեթոդներ

Հայաստանի՝ մինչև 2050 թ. վերափոխման տեսլականում կարևորվում է ոչ միայն կյանքի սպասվող տևողության երկարաձգումը մինչև 90 տարի, այլև, իբրև այդ ընթացքի շարունակական ապահովում, առողջ ապրելակերպը՝ դա դարձնելով ազգային հատկանիշ **[19, էջ 38]**: Ինչ խոսք, կանխատեսումը ռիսկային է, բայց կատարողականի յուրաքանչյուր աստիճան մոտեցնելու է վերոգրյալ խնդրի լուծումը (օրինակ՝ 2026 թ. մեկնարկած առողջության համապարփակ ապահովագրության արդյունքում հնարավոր է ձևավորել ավելի առողջ հասարակություն): Փաստացի՝ եթե ըստ Քեյնսի առաջին աշխատության, 90-ամյա փորձի սուբյեկտը դիտարկվի որպես առավելագույն արդյունքին համապատասխանող օբյեկտ, ապա ՀՀ-ում դա առկա է որպես ներկա պահին ապրող և մինչ այժմ աշխատանքային գործունեություն ծավալող անհատ: Բայց և այնպես, հասկանալի է, որ աշխարհում և մեր երկրում հանդիպող նման եզակի օրինակները չեն կարող ապահովել անցում մեկ մեթոդից մյուսին: Հանրային և շուկայական բարիքների փոխազդեցության պայմաններում, ըստ գիտական վերացարկման մեթոդի, յուրաքանչյուր շերտի նոսրացում ի հայտ է բերում համապատասխան դրսևորումներ մյուս փոխկապակցված մեթոդաբանական մեխանիզմներում: Այնուամենայնիվ, այս օրինակի ընդհանրացման և մանրամասնեցման արդյունքում կարելի է դիտարկել ընդհանուր օրինաչափությունները նշյալ խնդրի կարգավորման շրջանակում:

Հոդվածում ներկայացված խնդիրները, խմբային շահառուների տեսանկյունից ևս, հարկաբյուջետային հատվածի ընդհանուր օրինաչափությունների մասին են: Դա նշանակում է, որ քաղաքների համադրությունը ըստ բևեռացման, ապա նաև համեմատելիության հիմքի, հնարավորությունն չի ընձեռում վերլուծությունից անցնելու սինթեզի՝ համադրելիության լիարժեքության հատկանիշն ապահովելու համար, քանի որ համայնքների, իսկ այս դեպքում՝ խոշորացման գործընթացից դուրս մնացած քաղաքների բյուջեները ձևավորվում են ինքնուրույնության սկզբունքով:

Ստացված արդյունքներ

Ըստ կենսամակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականների՝ Հայաստանի տնային տնտեսությունների անդամների դեպքում առաջնային են համարվում 6 խնդիրներ, որոնցից ամենակարևորը բնակարանային հիմնահարցն է՝ 11,2 տոկոս ցուցանիշով, իսկ երկրորդ տեղում առողջության խնդիրը՝ 9,5 տոկոս: Մնացած հիմնախնդիրների կարևորությունը չի գերազանցում 5 տոկոսը: Ընդ որում, սննդի ապահովման հարցն այս համատեքստում նվազագույնն է: ՀՀ վե-ի կողմից նյութական գրկվածության աստիճանի հաշվարկման համաձայն, հաշվի առնելով 2024 թ. սոցիալական բացառումների 13 նոր հիմնական ցուցանիշները, բնակչության 46,7 տոկոսը չի կարող իրեն թույլ տալ օր ու մեջ ուտել մսային կամ համարժեք բուսակերային կերակուր: Նշվում է, որ նման պայմաններում 78,7 տոկոս առավելագույն ցուցանիշը վերաբերում է մեկ շաբաթ տևողությամբ արձակուրդ, իսկ 1,7 տոկոս նվազագույն ցուցանիշը՝ բջջային հեռախոս ունենալուն: Ըստ սուբյեկտիվ գնահատականների՝ մինչև 100, 200 և 400 հազ. դրամ մեկ շնչի հաշվով անհրաժեշտ ամսական անվանական գումարը համապատասխանաբար վերաբերում է գոյատևելու, լավ և շատ լավ ապրելու պայմաններին **[15, էջ 112]**:

Հիմք ընդունելով բևեռացման ամենամեծ ցուցանիշը՝ Շիրակի մարզն առանձնանում է բնակչության ամենամեծ թվաքանակով: Միաժամանակ, ընդգծվում է բնակչության նվազման փաստը՝ ավելի քան 3 տասնամյակի ընթացքում: Գյումրի քաղաքին բաժին է ընկել այդ ցուցանիշի մոտ 95 տոկոսը: Համեմատելով նշենք, որ 2025 թ. տարեսկզբի դրությամբ մեծաթիվ բնակչությամբ աչքի ընկնող 3 քաղաքները գտնվում են Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում՝ հետ թողնելով մայրաքաղաքի վարչական շրջաններից երկուսը՝ Նորք-Մարաշը և Նուբարաշենը՝ 10 000 - 19 999 մարդ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այս ցանկը գլխավորում էին Լոռու և Շիրակի մարզերը: ՀՀ չխոշորացված միակ համայնք-քաղաքի բնակչությունը 2025 թ. տարեսկզբին կազմել է 114 667 մարդ: Մյուս երկու քաղաքների բնակչության թիվը (գումարային՝ 23,6 հազ. մարդ) էականորեն զիջում է այս ցուցանիշը **[13, էջ 319, 375]**: Ընդհանուր է, մարդկանց թվաքանակի առումով, տարբեր տարիքային խմբեր կենտրոնացած են Երևան քաղաքում, բայց դա չի խանգարում որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրել Գյումրու փոքրաթիվ նախակենսաթոշակային տարիքային խումբը, քանի որ, անկախ ընդհանուր և հատուկ պատճառներից, վերջինս ևս նույն հարթության վրա է:

Հոդվածում, ի վերջո, դետալացումն ավարտվում է այն տարիքային խմբի առանձնացմամբ, որը տվյալ քաղաքային ռեժիմում համարվում է շեմային, բայց ամենակարճ՝ ներառյալ կանխատեսումային ժամանակահատվածում տեղաշարժվելով, բյուջետային բեռը կրելու բազմակողմ մասնակցությամբ՝ նվազագույնն ընդգրկում է կեսդարյա պատմություն:

Գրականության ակնարկում՝ լայն շրջանակով նկարագրված խնդիրների համատեքստում, անդրադարձը Գյումրու բյուջետային հիմնահարցերին պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆինանսավորման տեսանկյունից էական փոփոխությունները, կարծես, ամենևին էլ չեն վկայում առօրյա գործունեության բարելավման մասին: Այսպես՝ 2026 թ. նպատակային և ֆինանսական համահարթեցմանն ուղղվող միջոցների ծավալներն անհամեմատելիորեն փոխվել են հետքովիդային սկզբնական ժամանակաշրջանի համեմատ. խոսքը կրկնապատիկի և ավելիի մասին է:

Ավելի քան +/-35 տոկոս սեփական համայնքային բյուջետային եկամուտների հարաբերական ցուցանիշը էականորեն չի տարբերվում ՀՀ բյուջետային համակարգի ընդհանրական համեմատելի նույն ցուցանիշից: Սա վկայում է, որ արդյունքային հետևությունների համար առայժմ բավարար է ուղղորդվել Հայաստանի Հանրապետության և քաղաքի ուղեծրից դուրս այլ համեմատական շրջանակների ուսումնասիրությամբ:

ՀՀ Շիրակի մարզի օրինակով նշենք, որ 2021 թ. գործունեության ծրագրի բոլոր ոլորտների պահանջվող ֆինանսավորումը կազմել է 62,7 մլրդ դրամ (կատարողականը՝ 69 տոկոս): Ըստ մարզպետարանի տվյալների՝ ստեղծվել է ժամանակավոր և հիմնական 2158 աշխատատեղ, իսկ չալանավորված ծրագրերով՝ շուրջ 1171 աշխատատեղ: **[8, էջ 1, 17-18]**

Աղյուսակ 1


Շիրակի մարզի ոլորտային կատարողականը և ֆինանսավորման աղբյուրները, 2021 թ.

Ոլորտներ	մլն դրամ	100%	Ֆինանսավորման աղբյուրները	մլն դրամ	100%
Ենթակառուցվածքներ	38306,7	40,1	ՀՀ պետական բյուջեի սեփական միջոցներ	37147,8	59,3
Սոցիալական ոլորտ	21362,1	22,3	Մասնավոր ներդրումներ	14297,2	22,8
Տարածքային կառավարում	11038,9	11,5	Այլ աղբյուրներ	4164,0	6,7
Արդյունաբերություն, ՓՄՁ, մասնավոր հատված	9085,5	9,5	ՀՀ պետական բյուջեի վարկային միջոցներ	3908,7	6,2
Գյուղատնտեսություն	7540,9	7,9	Համայնքային բյուջե	1874,8	3,0
Քաղաքաշինություն	6443,3	6,7	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	1264,4	2,0
Ջրուսաշրջություն	909,1	1,0			
Բնապահպանություն	908,5	1,0			

Կարծում եմ, բյուջետային համակարգի համար առանցքային է.

1. Սկսած 2021 թվականից, ինչպես վերականգնողական, այնպես էլ աճի դրական միտումների տեսանկյունից, ՀՀ-ում կատարողականի որակական բաղադրիչը զարգանում է ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ: Մինչ ՀՀ-ում հարկաբյուջետային բարեփոխումների մեկնարկը՝ ծրագրային բյուջետավորման համակարգը ներդրվել է աշխարհի բազմաթիվ երկրներում՝ ապահովելով կտրուկ առաջընթաց: 15 զարգացած երկրների օրինակով կարելի է տեսնել, որ ՀՆԱ-ում պետական ծախսերի տեսակարար կշիռը տասնամյակների ընթացքում շեշտակիորեն աճել է, մասնավորապես՝ Դանիայում (2,5x), ապա Շվեդիայում (2,1x), Իսպանիայում (3,2x) և Հունաստանում (2,7x): Եթե 1960 թ. նվազագույն և առավելագույն ծախսեր/ՀՆԱ ցուցանիշներն ապահովել են Իսպանիան (13,7) և Ֆրանսիան (34,6), ապա 1995 թվականին համապատասխանաբար՝ ԱՄՆ-ն (33,5) և Շվեդիան (ավելի քան 66 տոկոս) **[1, էջ 851-854]**: Համաձայն վերջին երկարաժամկետ կանխատեսումների՝ զարգացած

տնտեսություններում ծախս/ՀՆԱ հարաբերակցությունը միջինում 38,6 տոկոսից 2030 թ. կհասնի 41,2 տոկոս ցուցանիշին: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ըստ երկարաժամկետ ծրագրերի, աճողական ցուցանիշները, համախմբված բյուջեի ծախս/ՀՆԱ հարաբերակցության տեսանկյունից, նախատեսվել են 30 տոկոսի շրջանակում՝ չնայած ներկա միջնաժամկետ նվազման միտումին: Համեմատության համար նշենք, որ աշխարհում, ըստ 2025 թ. կանխատեսման, այդ ցուցանիշը միջինում կազմել է 32,5 տոկոս՝ առավելագույնը՝ Լատինական Ամերիկայում (33,9 տոկոս), իսկ նվազագույնը՝ Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում:¹ Իհարկե, համեմատությունների շարքը շարունակելի է, բայց, ընդհանուր առմամբ, չենք կարող սահմանափակվել տարբեր երկրների ֆինանսական, քանակական և որակական բաղադրիչներով, քանի որ հասարակական կյանքը սպասարկող բյուջեի ձևավորման առանձնահատկություններն ուրույն դերակատարություն ունեն այս հարցում: Օրինակ՝ մեր երկրում հաջորդող ժամանակահատվածներում, կենսաթոշակային բարեփոխումներով պայմանավորված, բյուջետային շրջանառություններն անդրադառնում են ողջ ֆինանսատնտեսական համակարգի վրա: Ստորև ներկայացված են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրային ծառայության բաշխման տեսանկյունից ծախսերի գործառական կառուցվածքային դասակարգումն ըստ ֆինանսավորման աճի՝ բնակչության թվի համակցությամբ (գծապատկեր 1): [11 , 14– էջ 40]



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի 2025 թ. գործառական դասակարգման փաստացի ծախսերի և բնակչության կառուցվածքը

¹ Տվյալները վերաբերում են զարգացող շուկաներ և միջին եկամուտ ունեցող տնտեսություններին (կենտրոնական կառավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ապահովագրության հիմնադրամներին և այլն-General Government): ՀՀ և միջազգային փորձի դիտարկումը կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կայուն զարգացման, հեռանկարային զարգացման և տարբեր տարիների միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, հաշվետվությունները, <https://minfin.am>, ինչպես նաև IMF-ի կողմից 2024 և 2025 թթ. ֆիսկալ պատկերի հրապարակումները, <https://www.imf.org/en/Publications>

2. Ինչ վերաբերում է բյուջեի եկամտային մասին, ապա պետք է ամրագրել, որ հարկերը հավերժ են, և այս ընկալումը ՀՀ-ում տարեցտարի ավելի է արմատավորվում: Պատկերի էական փոփոխություն առաջիկա տասնամյակում առավել հավանական է կազմակերպական, քան քաղաքականության շրջանակում կարգավորումների իրականացման առումով: Համայնքային բյուջեների օրինակով կարելի է տեսնել, որ ուղղակի հարկերը, որպես սեփական հիմնական եկամտի աղբյուր, աննշան՝ 2 տոկոսը չգերազանցող ազդեցություն ունեն համախմբված բյուջեի վրա, և նույնիսկ գույքային հարկերին վերաբերող վերջին օրենսդրական փոփոխությունների ժամանակահատվածում եռապատիկից ավելի փաստացի հավաքագրումների պարագայում, վերջին տասը տարիների համեմատությամբ, փաստացի հարաբերական ցուցանիշների էական փոփոխություններ չեն գրանցվել:¹ Պետական բյուջեի օրինակով, խոշոր հարկատուների խմբի շնորհիվ, շարունակվում է հարկերի՝ 80 տոկոսի շուրջ տատանվող ցուցանիշով հավաքագրումը: Ընդ որում, 1000 խոշոր հարկատուների ցուցակում հարյուրավոր նոր ընկերություններ են ընդգրկվել, և վերջին տարիներին նույն խմբի՝ Երևանում գրանցված հարկատուների կենտրոնացվածության կամ ՀՀ մարզերի կողմից 2025 թ. փաստացի հարկերի ընդհանուր գումարի 17,3 տոկոսն ապահովող և ենթախմբային համեմատական ցուցանիշների այլ դրական տեղաշարժեր են գրանցվել² [12]:

3. Երկմակարդակ բյուջետային համակարգում ցայսօր կուտակված պարտքային պարտավորությունները, օրենսդրական փոփոխությունների համաձայն, 2026 թվականից ի վեր համարվում են համախմբված: Քանի դեռ հարկազանձումը «կաղում» է, բյուջեն համալրող՝ մշտական համարվող փոխառու միջոցների խնդիրը ևս հանդես է գալիս ժամանակային սահմանափակումով: Պատճառը ՀՀ անկախացումից հետո պարտքի սփռվածությունն է անընդհատության ռեժիմով, և ներկայիս դրությամբ դա երկարաձգվելու է մինչև 2054 թվականը: Նշենք միայն, որ 2025 թ. ՀՀ ԿԲ 200 մլրդ դրամ պարտքի 6,4 տոկոսով նվազման պայմաններում ՀՀ պետական պարտքը տարեվերջին կազմել է 5,541.7 մլրդ դրամ կամ 14,5 մլրդ դոլար [18, էջ 3], իսկ 2026 թվականի տարեսկզբին ՀՀ համայնքների 3,2 մլրդ դրամ պարտքի ավելացմամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,303.2 մլրդ դրամ: Համայնքային պարտքի 7 մլն դոլար արտաքին պարտքը Երևան քաղաքի էներգաարդյունավետության ծրագրի, իսկ մնացած մասը, որպես ներքին պարտք, ՀՀ Գեղարքունիքի և Շիրակի մարզերի գյուղուղորտի զարգացման շրջանակներում է [17]: Պարտքի գոյացման և կառավարելիության հարցը, հարկաբյուջետային զսպող քաղաքականության տեսանկյունից, հաջորդող տասը տարիներին կարող է հանգեցնել ապագա տնտեսական զարգացումներն առավելագույնս չսահմանափակող պարտքային բեռի սահմանային մակարդակի որոշակիացմանը:

Զարգացած երկրներում, ֆոնդահայթայթման տեսանկյունից, բացի հարկերից և տուրքերից, բյուջեն ձևավորող կարևոր եկամուտ են համարվում սոցիալական վճարները: Այս եկամտատեսակների և պարտքի բաղադրիչները երկրի զարգացման բարձր մակարդակի պարագայում կարծես ձգտում են

1 Հաշվարկը կատարել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ ՖՆ և ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջերի տարբեր տարիների հաշվետվական տվյալները, <https://minfin.am/hy>, <https://armstat.am/am/?nid=82>

2 Հեղինակի հաշվարկի հիմքում [12] – <https://src.am/am/getMenusContents/120>

համարժեքության, քանի որ արտադրատնտեսական հարաբերությունները չեն «զգուշանում» դրանց ծավալման արդյունքում արդյունավետ վերաբաշխման խնդիրներից: Զարգացման ավելի ցածր մակարդակ ունեցող երկրներում, հարցի երկկողմանիությունը հաշվի առնելով, նման մոտեցումը հասարակության կողմից ընկալվում է որպես բեռի ծանրացում: Դիտարկենք բնակչության որոշակի տարիքային խմբի համար ամենակարճ հեռանկարում տեղավորվող բաղադրիչի հետ կապված հարցը:

Միակողմանիությունից դուրս տարիքային խմբերից կենսաթոշակառուների, առավել ևս նպաստառուների հանրագումարով ¼-ը չգերազանցող աշխատուժի կայունությունը մեծամասնությունն դառնալու հակում չունի: Տնտեսագիտության դպրոցն առանձնացրել է 55 տարեկան շեմը՝ որպես աշխատուժի եկամուտների բացասական փոփոխության օբյեկտիվ սահմանագիծ: Անկախ նրանից, թե աշխարհում արձանագրվող 55 տարիքային շեմի առնվազն տասնամյա նվազման միտումները որքանով են համահունչ հայաստանյան իրականության մեջ արտացոլվող տեմպերին, փաստ է, որ խնդրի հետազոտման շրջանակն ընդգրկուն է: Ուստի և, բյուջետային տեսանկյունից, մոտալուտ տասնամյակում ուշադրության արժանի աշխատանքային ռեսուրսների շրջանակը թեև ավելի է նեղանում, բայց թիրախային տարիքային խմբի լիարժեք առանձնացումը հնարավոր է դառնում, քանի որ վերջինս ընդգրկված է վճարումների և ստացումների համակարգում՝ նաև սոցիալական վճարների մասով: Անդրադառնալով կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին՝ չենք կարող չնշել, որ այս խողովակը բազմաշերտ է: Ընտրված խմբային շրջանակում միջին տարիքային խումբն ավագ խմբերից առանձնանում է հավելյալ միջոցներ ստանալու հատկանիշով՝ չբացառելով ներկայում կենսաթոշակային տարիքին մոտեցողների՝ 2037 թվականից սպասվող ստացումներին կամավոր միանալու հանգամանքը: Ըստ վիճակագրական տվյալների՝ աշխատանքային ռեսուրսների (2463,1 հազ. մարդ) և աշխատուժի (1368,7 հազ. մարդ) տարիքային խմբերից առանձնանում են 45-54 և 55-64 տարիքային շեմերում գտնվողները: Այսինքն՝ այս ամենացածր տարիքային խմբի մեծամասնության դեպքում կուտակային հատկացումների անցնելիս աշխատանքային կենսաթոշակի մեծությունը բանաձևող նվազագույն ստաժը նույնպես շեմային է համարվում: Մինչդեռ ՀՀ բնակչության շրջանում աշխատանքային ավելի ցածր տարիքային խմբերը գործում են ինքնաֆինանսավորման տրամաբանության ներքո: Գումարային արտահայտությամբ՝ 45-64 տարիքի աշխատանքային ռեսուրսների թիվը 771,7 հազ. մարդ է, որի 62,4 տոկոսը՝ քաղաքաբնակներ, իսկ աշխատուժի մասով՝ համապատասխանաբար 524 հազ. մարդ և 36,7 տոկոս [6]: 2025 թ. դրությամբ Երևան քաղաքի դեպքում 45-64 տարիքային խումբը վերաբերում է 279441 մարդու: Շիրակի մարզի նույն խմբի միայն քաղաքային բնակչությունը 55,4 տոկոսն է կազմում, Երևան քաղաքի՝ 11,5 տոկոսը: Զարմանալիորեն, սկսած 2011 թվականի կենսաթոշակային բեկումնային փոփոխությունների մեկնարկից մինչ 2025 թվական, ՀՀ թիրախային խմբից միայն 60 անց տարիքային խումբն է տարիքային շարժականությամբ ապահովել մարդկանց թվի դրական փոփոխություն (ընտրանքից 45-49 տարեկանների դեպքում բացասական շեղումն ամենամեծն է՝ 35 հազ. մարդ) [14, էջ 47, 60 և 62] և մյուսների համեմատ գրանցել է նվազագույն՝ 16,6 տոկոս աղքատության ցուցանիշ [15, էջ 41]: Ու թեև այս խումբը ևս հաշվի ենք առել ապագայում հատկացումների

համակարգի կայացման տեսանկյունից, այդուհանդերձ հիմնական միտումը շահառուների բաժնետիրացման իրավունքի իրացման դաշտի ընդլայնումը կարող է լինել:

Եզրակացություն

Հողվածում ներկայացված բնութագրերը, սահմանափակված լինելով ժամանակային գործոնով, բյուջետային խնդիրների լուծումների շարքում քննարկելի են այնքանով, որ աշխատանքային ռեսուրսների օգտագործման հնարավորությունների ընդլայնումը աղքատության հաղթահարման՝ հաջորդիվ իրականացվելիք միջոցառումներից է: Հետաքրքրական է հատկապես սոցիալամետ բյուջեի ստացումների և վճարումների համապատասխանությամբ ծախս/ՀՆԱ հարաբերակցության մակարդակի բարձրացման հանգամանքը՝ նմանօրինակ այս հղման (տե՛ս գծապատկեր 1-ի հղումը՝ https://armstat.am/file/article/sv_12_25a_142.pdf, էջ 109), երբ ժամանակի որոշակի կտրվածքով ՀՀ տնտեսությունում և սոցիալական ոլորտներում աշխատավարձի գծով ցուցանիշների փոփոխությունները բոլոր տարիների համար դրական են: Հետևաբար՝ վերստին կարող ենք վկայել, որ էականն աճն է՝ մրցակցության մեջ առանց մրցակցության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գոռթնի Զ. Դ., Ստրոուպ Ռ. Լ., Տնտեսագիտություն, Մասնավոր և հասարակական ընտրություն/ խմբ.՝ Կիրակոսյան Գ. Ե., Երևան, «Տնտեսագետ» հրատ.2003թ., 1152 էջ
2. Սամյուելսոն Փ. Ա.,Նորդհաուս Ու. Դ, Տնտեսագիտություն II, Միկրոտնտեսագիտություն, ՀԱՀ Գործարարության հետազոտությունների և զարգացման կենտրոն, Երևան, «Ապոլոն» 1996թ., 464 էջ
3. Թադևոսյան Զ., Բուլանիկյան Վ. և ուրիշներ, ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում («Ամբերդ» մատենաշար 36), Երևան, «Տնտեսագետ» հրատ.2020թ., 146 էջ
4. Ավետիսյան Գ., Գյումրի քաղաքի շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների մասին, «Աշխարհագրության երկրաբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ հրատ. 2018թ., էջեր 41-45
5. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի բնակչության բնական վերարտադրության ժամանակակից միտումները և առկա խնդիրները, «Նոր տնտեսական աշխարհակարգ» գիտական պարբերական, ՀՊՏՀ ԳՄ, Գյումրի 2023/1, էջեր 133-139
6. Մկրտչյան Լ, Վերջնական արդյունքներին ուղղված կամ նպատակա-ծրագրային բյուջետավորման եղանակի մշակման ու ներդրման միջազգային փորձը ԱՄՆ օրինակով, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա»,# 2 (91), Երևան, 2008թ., էջեր 9-18
7. Komorowski J., Komorowski P. International Economic Policy for the Polycrisis, Imprint Routledge 2025, pages 114-138. DOI: 10.4324/9781003487913-6
8. ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման 2021թ. գործունեության ծրագրի մոնիթորինգի տարեկան հաշվետվություն, ՀՀ ՏԿԵՆ պաշտոնական կայքէջ, 25 էջ https://api.mtad.am//storage/pages/files/2022/04/pdf/06_12-46-sc592-62e160276a342.pdf (23.01.2026)
9. ՊՖԿՀԲ 2019-2023թթ. իրականացվելիք գործողությունների ծրագրի միջոցառումների 2021 թ. կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն, ՀՀ ՖՆ պաշտոնական կայքէջ https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_pfk_ (24.03.2026)
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2023, ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջ <https://armstat.am/am/?nid=586&year=2023> (24.03.2026)
11. ՀՀ համայնքների (ըստ մարզերի) բյուջեների ծախսերի վերաբերյալ հավելված 3, 2025 թ. ՀՀ ՏԿԵՆ պաշտոնական կայքէջ, <https://www.mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities?file=panel10338> (21.03.2026)
12. Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2025թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում վճարված հարկերի և վճարների մեծությունների ցանկ, ՀՀ ՊԵԿ պաշտոնական

կայքէջ, <https://src.am/am/getMenusContents/120> (14.03.2026)

13. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2025 ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջ, <https://armstat.am/am/?nid=82&id=2778>, (23.01.2026)
14. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2025 ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջ, <https://armstat.am/am/?nid=82&id=2786> - (23.01.2026)
15. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2025 ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջ, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2779> (23.01.2026)
16. Աշխատանքի շուկան Հայաստանում, 2025 ՀՀ ՎԿ պաշտոնական կայքէջ, <https://armstat.am/am/?nid=82&id=2787> , (25.03.2026)
17. ՀՀ պետական պարտքի ամսական տեղեկագիր, փետրվար 2026թ., ՀՀ ՖՆ պաշտոնական կայքէջ, https://minfin.am/hy/page/amsakan_vichakagrakan_teghekagrer/ (22.03.2026)
18. Կառավարության պարտքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ ՖՆ պաշտոնական կայքէջ, <https://minfin.am/website/images/files/a0dccc56.pdf> (22.03.2026)
19. Հայաստանի վերափոխման ռազմավարությունը, 2050 https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf (23.03.2026)
20. International Monetary Fund (IMF). 2025. Fiscal Monitor: Spending Smarter: How Efficient and Well-Allocated Public Spending Can Boost Economic Growth. Washington, DC: IMF, October. <https://www.imf.org/-/media/files/publications/fiscal-monitor/2025/october/english/text.pdf> (25.03.2026)
21. National Accounts of OECD Countries, General Government Accounts 2022, OECD Publishing, Paris https://www.oecd.org/en/publications/national-accounts-of-oecd-countries-general-government-accounts-2022_6cc4b49e-en.html (27.03.2026)